ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ,

1 փող. 38, Հեռ. (0222)63539

N 605

*19 հոկտեմբեր 2018թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պետրոսյան

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջներով, Ձեզ է ներկայացվում համայնքի ղեկավարի որոշումները 2018թ-ի հոկտեմբերի 15-ից հոկտեմբերի 19-ը ընկած ժամանակահատվածի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Կատ.՝ Ա. Պետրոսյան*

*Հեռ. 022263539*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**

**ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 240-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի V գլխի 34-րդ կետը, Բալահովիտ համայնքի ավագանու 2011թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 44-Ն որոշումը և հաշվի առնելով <<Երկսար>> ՍՊԸ-ի Լ/Ա Եղիշե Բազոյանի, դիմումը որոշում եմ.

1. <<Երկսար>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ (սեփականության իրավունքի վկայական N1830481 տրված 19.02.2004թ) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասին և հողամասի վրա տեղակայված շենք շինություններին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ գ. Բալահովիտ 8-րդ փողոց թիվ 1, (ծածկագիր 07-018-0101-0027):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2018թ. հոկտեմբերի 15
գ. Բալահովիտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**

**ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 241-Ա

### <<ԼԵՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ>> ԱՁ_ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Բալահովիտ համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 22-ի N 42-Ն որոշման, հիմք ընդունելով <<Լենա Պողոսյան>> ԱՁ-ի 2018թվականի հոկտեմբերի 10-ի հայտը՝ որոշում եմ

1. <<Լենա Պողոսյան>> ԱՁ-ին տալ 2018թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գ.Բալահովիտ 1-ին փողոց 3-րդ փակուղի թիվ 3/1 հասցեում գտնվող խանութում /35ք.մ/ ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2018թ հոկտեմբերի 15

գ.Բալահովիտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

## ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 242-Ա

### <<ԼԵՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ>> ԱՁ_ԻՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Բալահովիտ համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 42-Ն որոշման և հաշվի առնելով <<Լենա Պողոսյան>> ԱՁ-ի 2018թվականի հոկտեմբերի 10-ի դիմումը՝ որոշում եմ

1. Թույլատրել <<Լենա Պողոսյան>> ԱՁ-ին տեղադրել այլ արտաքին գովազդ, /0.75 քմ/ 2018թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018թվականի դեկտեմբերի 31-ը գ. Բալահովիտ 1-ին փողոց 3-րդ փակուղի թիվ 3/1 հասցեում:
2. Հաստատել այլ արտաքին գովազդի էսքիզը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2018թ հոկտեմբերի 15

գ.Բալահովիտ

Հավելված
Բալահովիտ համայնքի ղեկավարի
2018թ-ի հոկտեմբերի 15-ի թիվ 242-Ա որոշման

1.50

0.5

Մթերք
Տնտեսական ապրանքներ

Համայնքի ղեկավար՝ Կ.Գրիգորյան